

չասուր ծառայիս» (Մկրտիչ եպոս. Աղաւնունի, Մէսքաւ և Այդեւոս, էջ 91): Տահաւին այդ թուականին Սաչատուր վրդ. Կեսարացի իբր նուիրակ Մովսէս կաթողիկոսէն չէր զրկուած Փոքր Ասիա (1630) և այդ առթիւ տեսնուած չէր Գրիգոր Կեսարացիի հետ, հետեւաբար այս ներբողեանը այդ առթիւ գրած չի կրնար ըլլալ: Հետեւաբար իրեն Կեսարացի մը ըլլալը կը մտածեմ թէ 1695-1701 շրջանին, ուր հաւանօրէն Կեսարացի ուսուցանելով կ'զբաղէր, ինքն ալ աշակերտած է անոր:

Իսկ եթէ ոչ իբր աշակերտ Մովսէս Տաթևացիի՝ անոր վարդապետին պարտաւոր կը նկատէ ինքզինքն:

Այս վերջին ձևովն է անշուշտ որ Յակոբ կաթողիկոս Զուղայեցի, որ ուղղակի Գրիգոր վրդ. Կեսարացիի հետ ոչ մէկ կապ ունեցած է, ինքզինքն աշակերտ Կեսարացիի նկատել պարծանք համարած է, ինչպէս կը տեսնուի Երուսաղէմի մատենադարանը պահուած ձեռագիրի մը (թ. 1042) մէջ, ուր կայ հատուած մը «Յակոբ վրդ. Զուղայեցոյ Գանձի ի վերայ Մովսէս կաթողիկոսի Տաթևացոյ և Գրիգորի սեծ վարժապետիև որ վախճանի ի քիս. 1635. խօսեցեալ ի քի. 1680 ի վերջնում ստի կենաց իւրոց և սնուանե գանձն աշակերտս նորիև»: